# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2026թ. թիվ 174-Ա

## Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Ա.Հակոբյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Աղունիկ Ռազմիկի Հակոբյանին 2026թ. մարտի 17-ից ազատել «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2025 թվականի հուլիսի 16-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Աղունիկ Հակոբյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթա-շրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4.3-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը ստորագրվելուց հետո երեք օրվա ընթացքում ծանուցել հասցեատիրոջը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, էլեկտրոնային փոստի կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. մարտի 17
ք.Վանաձոր